Մրցույթ «ՀՀ Լոռու Մարզի Լորուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-Ը հայտարարում է մրցույթներ՝ զինղեկի 1 միավոր, հասարակագիտության (7 ժամ), տեխնոլոգիայի (2 ժամ), աշխարհագրության (7 ժամ), քիմիայի (8 ժամ), և ռուսաց լեզվի (23 ժամ) թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

. Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

.Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

.Անձը հաստատող փաստաթուղթ,

.«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

.Ինքնակենսագրություն (Ձև 5),

.Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

.ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

.Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

.Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

.Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N 596-Ն ելու դեպքում 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն (մասնակցած լինելու դեպքում): (17-րդ կետը փոփ., լրաց. 11.10.2023 N 128-Ն):

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև հունիսի 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթները տեղի կունենան հունիսի 24-ին ՝ ժամը 12:00-ին, Լորուտի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել (093) 84-82-62 հեռախոսահամարով: